

ԵՂԻՇԵ ԻՇԽԱՆՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆԱՄԱԿՆԵՐԸ*

Եղիշե Իշխանյանը 20-րդ դարի այն ազգային-քաղաքական գործիչներից է, ում մասին համեմատաբար նվազ տեղեկություններ են պահպանվել պատմագիտական և հուշագրական գրականության մեջ: Միայն 1999 թվականին, երբ Երևանում լույս տեսավ նրա օրագրությունների հիման վրա կազմված «Լեռնային Ղարաբաղ, 1917-1920» գիրքը, որոշակի պարզություն մտցվեց Ղարաբաղի, Վայոց Ձորի ու Ջանգեզուրի 1919-1921 թթ. իրադարձություններում վերջինիս ունեցած դերակատարության մեջ:

Եղիշե Իշխանյանը ծնվել է Շուշիում՝ 1886 թ. հունվարի 1-ին: Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում: Լինելով Կոստի Համբարձումյանի, Վահան Նավասարդյանի և այլ ճանաչված գործիչների դասընկերը, պատանի հասակից հարել է ՀՀ Դաշնակցությանը: Կուսակցական հանձնարարություններ կատարելու ընթացքում մի քանի անգամ ձերբակալվել ու բանտարկվել է ցարական ոստիկանության կողմից:

Բարձրագույն գյուղատնտեսական կրթություն ստանալու նպատակով մեկնել է Ս. Պետերբուրգ, որտեղ ակտիվորեն մասնակցել է դաշնակցական ուսանողության գործունեությանը:

Փետրվարյան հեղափոխությունից հետո՝ 1917 թ. հունիսին, վերադառնալով Շուշի, Եղիշե Իշխանյանն ամբողջովին նվիրվում է կուսակցական-հանրային գործունեությանը՝ ակտիվ մասնակցություն ունենալով Ղարաբաղում ծավալվող բուռն իրադարձություններին: Ընտրվելով երկրամասում հայկական անկախ կառավարության դերը ստանձնած Ազգային խորհրդի նախագահ, նա մեծ ջանքեր է քափում հայկական ուժերը կազմակերպելու, թաթարների ու թուրքերի, իսկ այնուհետև՝ անգլիացիների դավերը չեզոքացնելու համար: Հենց այդ գործունեության պատճառով էլ 1918 թ. հոկտեմբերին բանտարկվում է Շուշի մտած թուրքերի կողմից, իսկ 1919-ի հունիսին, մի քանի այլ գործիչների հետ միասին, այս անգամ անգլիական զինվորականներն են նրան արտաքսում Ղարաբաղից:

Ղարաբաղի և Սյունիքի հանդեպ տարվող քաղաքականության հարցերում լուրջ տարակարծություններ ունենալով Հայաստանի Հանրապետության պետական ու կուսակցական ղեկավար գործիչների հետ, 1919 թ. վերջերին Երևանում գտնվող Ե. Իշխանյանը հրաժարվում է կուսակցության ու կառավարության հա-

*Ընդունվել է տպագրության 9.11.2011:

տուկ հանձնարարությամբ Ղարաբաղ վերադառնալուց:

Այդ շրջանից տարբեր առիթներով լինելով Վայոց Ձորում, Ե. Իշխանյանը 1920 թ. հոկտեմբերի 26-ին ՀՅԳ Բյուրոյի հատուկ որոշմամբ հաստատվում է Քեշիշքենդում (այժմ՝ Եղեգնաձոր) Ջանգեգուրում Բյուրո-կառավարության ներկայացուցիչ Գարեգին Նժդեհի հետ գաղտնի կապն ապահովելու նպատակով: Միաժամանակ, Եղիշե Իշխանյանը ստանձնում է նաև Վայոց Ձորի ՀՅԳ-կուսակցական աշխատանքների ղեկավարումը:

Երբ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանը խորհրդայնացավ, կուսակցական վերին մարմնի հրահանգով Եղիշե Իշխանյանը մնաց Քեշիշքենդում և դառնալով «Դարալագյազի Հեղկոմի քարտուղար»՝ շարունակեց իր գործունեությունը, մինչև որ 1921 թ. փետրվարի 16-ին Լեռնահայաստանի Արևմտյան ճակատի հրամանատար Յապոնի գործերի կողմից Վայոց Ձորն ազատագրվեց բոլշևիկյան բռնապետությունից: Այդ ընթացքում ևս, օգտագործելով իր նոր դիրքը, Եղիշե Իշխանյանը շարունակում էր կապավորի դեր խաղալ Գ.Նժդեհի և Երևանի ՀՅԳ կազմակերպության միջև, որի համար հետագայում բարձր գնահատականի է արժանացել Գ. Նժդեհի կողմից. «Անցնում եմ Քեշիշքենդով: Այստեղ է Վայոց Ձորի Փրկության կոմիտեի նախագահ Եղիշե Իշխանյանը, որը մեր գործերի պարենավորման և մեզ ռազմամթերք հասցնելու գործում կատարել է եզակի դեր: Վայելելով ժողովրդի վստահությունը, այդ անխոնջ գործիչը Դարալագյազ էր անցնել դեռ Հայաստանի Հանրապետության օրոք»¹:

1921 թ. ապրիլի 16-ին, երբ Դարալագյազի գավառի մեծ մասը կրկին անցնում է բոլշևիկների ձեռքը, Վայոց Ձորի Փրկության կոմիտեի նախագահ Եղիշե Իշխանյանը հայկական ուժերի հետ նահանջում է դեպի Լեռնահայաստան. իսկ հուլիսին Արաքսն անցնելով՝ տարագրվում է Իրան:

Իրանում Եղիշե Իշխանյանը կազմակերպում և երկար տարիներ ղեկավարում է արտերկրի և Խորհրդային Հայաստանի ՀՅԳ ընդհատակյա մարմինների կապը²: Եվ Վայոց Ձորում ժամանակին նրա ծավալած բեղուն գործունեությունն էր պատճառը, որ գաղտնաբար Խորհրդային Հայաստան անցնող դաշնակցական-սուրհանդակների մեջ մեծ թիվ էին կազմում վայոցձորցիները՝ Հերիեր գյուղից Խաչատուր Մանուկյանը (Դարբին), Աղավնաձոր գյուղից Մամիկոն Չաքարյանը (Թորոս), Խաչիկ գյուղից Մամիկոն Աբրահամյանը, Ղաշխեցի Հովակիմը (Յուլակ-Կոստանդ), Արփա գյուղից Խաչատուր Դավթյանը և այլք: Իսկ այդ երթուղու կարևոր հանգրվաններից մեկում՝ իրանական Ջուլֆայում կուսակցության ներկայացուցիչն էր «Ջուլֆայի Արան»՝ Արա Ղարախանյանը՝ Արփա գյուղից, որը կարևոր դերակատարություն ուներ այդ գործում³:

Եղիշե Իշխանյանը 1929-ին մասնակցում է ՀՅԳ 11-րդ Ընդհանուր ժողովին և երկար տարիներ վարում է Իրանում ՀՅԳ Բյուրոյի ներկայացուցչի պարտականությունը⁴: Բայց դյուրին չէր մի հսկա պետության ուժային կառույցների հետ անհավասար գոտեմարտը, և Խորհրդային Հայաստանում ծավալված զանգվա-

1 Գ.Նժդեհ, Ազատ Սյունիք, «Հայրենիք», ամսագիր, հուլիս, 1925թ., էջ 84:

2 Ժամանակի մամուլի հրապարակումներում նշվում էր, որ դեռ վաղաժամ է խոսել այդ գործունեության մասին: Կարծում ենք, սակայն, որ ներկայումս բոլոր պայմաններն առկա են Խորհրդային Հայաստանում իր գործունեությունը ծավալած դաշնակցական ընդհատակի պատմությունը գրելու համար:

3 Տե՛ս Յուլանատեան ՀՅԳ, Վլբոմ-ատլաս, Լոս Անճելես - 2001: Տե՛ս նաև՝ «Վլիք», Թեհրան, 27.09.1962.:

4 Գուցե դա էր պատճառը, որ Իրանի Մուժամբար գյուղում հաստատված Յապոնը (Հովհաննես Պարոնյանը), որի հանդեպ դեռ Վայոց Ձորում իր գործունեության ընթացքում Եղիշե Իշխանյանը բացասաբար էր տրամադրված, ամբողջովին մեկուսացվեց կուսակցական-քաղաքական կյանքից:

ծային տեռորի ու բռնությունների պայմաններում ՀՅԳ-ը նդհատակյա կազմակերպությունների լուծարումը պատճառ է դառնում, որ տեղեկությունների արտահոսքի կասկած առաջանա: Այդ գործի ղեկավար Եղիշե Իշխանյանը ենթարկվում է կուսակցական պատժի և դուրս է մնում կուսակցության շարքերից, ինչը երկար տարիներ ծանր ապրումներ է պատճառում նրան: Սակայն, ի վերջո, արդարությունը հաղթանակեց, և 1972-ին ՀՅԳ-ը 20-րդ Ընդհանուր Ժողովը վերանայեց Եղիշե Իշխանյանի հարցը և վերականգնեց նրա դիրքն ու կուսակցական վարկը:

Մինչ այդ, Եղիշե Իշխանյանը 1965 թ. ընտանիքով կնոջ՝ Գոհարի և դստեր՝ Կարինեի հետ տեղափոխվել էր Նյու Յորք, որտեղ էլ իր մահկանացուն կնքեց 1975 թ. ապրիլի 28-ին:

Ներկայացվող նամակներն ուղղված են Իշխանյանների ընտանիքի մերձավոր Շավասպ Ահարոնի Թովմասյանի (Բունիաթյանի)⁵ դստերը՝ Մարգարիտային: Որպես պատմական փաստաթղթեր, այս նամակները որոշակի տեղեկություններ են տալիս մինչև կյանքի վերջը հայ ժողովրդին հուզող խնդիրներով մտահոգ Եղիշե Իշխանյանի գործունեության մասին:

Նամակները մեզ է տրամադրել ներկայումս Իտալիայի Միլան քաղաքում բնակվող Մարգարիտա Թովմասյան-Ֆրանչեսկոնին՝ իտալացի հայտնի քանդակագործ և նկարիչ, Մեծ եղեռնի թեմայով ստեղծագործությունների հեղինակ Անսելմո Ֆրանչեսկոնիի այրին:

Աշոտ Գ. Սիմոնյան

THE NEWLY DISCLOSED LETTERS OF EGHISHE ISHKHANYAN

Ashot G. Simonyan

5 Շավասպ Թովմասյան (1898-1983), ծնունդով Վայոց Ձորի Վերնաշեն (նախկինում՝ Բաշքենդ) գյուղից, Վայոց Ձորի ԴՅԴ առաջին կոմիտեի հիմնադիրներից Ահարոն Բունիաթյանի և նշանավոր հայդուկ-քահանա Դարալազյազգի Տեր-Գրիգորի (համաստրի Տեր-Գրիգոր, Բիծա) Եղիսաբեթ դստեր որդին: Ամուսնացած լինելով պարսկահպատակ ընտանիքից՝ Փեփրոնեի հետ, վերջինիս հետ 1935 թ. տարագրվել է Իրան: Մտերմիկ կապեր է ունեցել Արմեն Գարոյի ընտանիքի, ինչպես նաև Եղիշե Իշխանյանի, Ռուբեն Աբրահամյանի, Արշակ Դովհաննիսյանի և այլ նշանավոր անձանց ու նրանց ընտանիքների հետ: Շավասպ Թովմասյանը անհրաժեշտության դեպքում նաև օգնության ձեռք է մեկնել իր հայրենակիցներին, եղել է վայոցձորցի ճանաչված իրանագետ-լեզվաբան և բանասեր Ռուբեն Աբրահամյանի (որը նաև իր ազգականն էր) մի քանի գրքերի մեկենասը:

MR. & MRS. Ishkanian
91-04 70th Avenue
Forest Hills, N.Y. 11375

Mrs- Margo Francesconi
32 Via Ariosto
Milano, Italia

14 Յունուար 1968թ. Նիւ Եորք

Սիրելի Մարգուշա¹,

Նամակս անակնկալ կլինի քեզ համար, գրում եմ եանկլիների հեռավոր երկրից, ուր եկել եմ հակառակ իմ ցանկության, պայմանների և զանազան հանգամանքների հարկադրանքի հետևանքով: Չեկած այստեղ, եթե չեմ սխալվում, Թեհրանում, ձեր տանը, քո ներկայությամբ էլ առիթ ունեցել եմ արտահայտվելու, որ եանկլիների երկիրը ինձ նմանների տեղը չի, այստեղ եկողը պետք է երիտասարդ լինի, կարողանա համակերպվել տեղական պայմաններին, ակլիմատիզացիոն ենթարկվի և համաշխարհային այս ձուլարանին կույ գնա:

Արդեն երրորդ տարին է, ինչ եկել եմ տեղս և ունեցածս տեսակետը ավելի է ամրացել այստեղի մասին, զուտ հայապահպանման մասին, որ մարդկային այս օվկիանոսի մեջ հայությունը պիտի ձուլվի ի վերջո: Չնչին ազգային մի քանակ, ցրված հսկայական տարածության վրա, ամիսներով իրար չհաղիպելով, պարզ է, պիտի կույ գնա և ինչպես մեկից ավելի անգամ գրել եմ հայկական թերթերում մեր հրապարակախոսներից, 20-50 տարի հետո Ամերիկայում պիտի լինեն հայկական ծագում ունեցող ամերիկացիներ, ինչպես դարեր առաջ Լեհաստանի 60-70 հազար հայությունը կույ է գնացել միջավայրին և լեհերի թիվը ավելացել է հայկական ծագում ունեցող լեհերով: Երեք տարի առաջ Թեհրանում կարդացի «Նաիրի» շաբաթաթերթում (Բեյրութ), թե Փարիզի լեհական դեսպանը պարծենում է, որ իր նախահայրերը հայեր են եղել:

1 Մարգարիտա Շավասպի Թովմասյան (ծնվ.1928 թ): 1947-1949 թթ. սովորել է Ժնևի համալսարանում:
2 Փեփրոնե Քուչուկյան (1910-2001), Մարգարիտայի մայրը: Ծնունդով Սարիղամիշից:
3 Լիզա, Շավասպ Թովմասյանի կրտսեր դուստրը:
4 Արմեն Կարապետյան, Լիզայի ամուսինը:
5 Շարիս, Արմենի և Լիզայի դուստրը:
6 Եղիշե Իշխանյանի կինը:
7 Եղիշե Իշխանյանի դուստրը:

Ամսոյա 1-ին Փեփրոնեն², Լիզիկը³, Արմենը⁴ և շատ սիրելի փոքրիկ Շարիսեն⁵ մեզ մոտ էին ու մի քանի ժամ մեզ զգացինք Թեհրանում: Եթե Փեփրոնեն ձեր մոտից եկած չլիներ այստեղ, երբեք չպիտի իմանայինք, որ Լիզիկն ու Արմենը Վաշինգտոնից փոխադրվել են տեղս: Օրինյալ լինի Փեփրոնեն, որ եկավ մեր կապը վերականգնեց: Լիզիկը իմ տեղս գալու մասին չգիտեր, Փեփրոնեն է հայտնել: Թեհրանից ես տարականոն պայմաններում, ինչպես կասեն՝ շտապ-շտապ կերպով հազիվ կարողացա պաշտոնաթող լինելուց լիվլիղե անել գործս ու հանձնել ինձ փոխարինող պաշտոնեային և հապշտապ էլ մեկնեցի Թեհրանից, չկարողացա վերցնել քո և Լիզիկի հասցեները: Հիմա Արմենը տվեց հասցեդ:

Լիզիկն արդեն երկու երեխա ունի, իրենց հետ բերել էին միայն մեծին՝ Շարիսեին, որ շատ լավ երեխա է և որին շատ սիրեցինք:

Այսօր Լիզիկը հեռախոսով հայտնեց, որ նախանցյալ օրը Փեփրոնեն մեկնել է Թեհրան և շատ ափսոս, որ չի հաջողվել երկրորդ անգամ հանդիպելիք ու սրտանց զրուցելիք: Ինչպես Լիզիկն ասաց, Փեփրոնեն մեջքի ցավ է ունեցել և հինգ օր տնից դուրս չէր եկել: Ապա հայտնեց, որ մենք երեքով գնանք իրենց մոտ, Արմենը պիտի գա և իրա մեքենայով տանի: Հարկավ, կանխավ պիտի պայմանավորվենք, օրը, ժամը որոշենք, այլ կերպ հնարավոր չէ:

Գոհարն⁶ ու Կարինեն⁷ աշխատում են, իսկ ես անգործ եմ, յոթանասուներ անցած մարդկանց, մանավանդ ինձ պես անգրագետին, որ անգլերեն չգիտե, ո՞վ գործ կտա, ուստի շարունակ տունն եմ, տան աշխատանք եմ կատարում, մի քիչ օգնելով մերոնց, կերակուր եփում, սեղան սարքում և նման մանր աշխատանքներ:

Պտույտներ ու շրջագայություններ անելու հավես չունեմ, ամերիկեան քաղաքները եվրոպական քաղաքների գեղեցկությունը չունեն, մասնավորապես Նիու Եորքը, իր երկնաքերե-

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Գ. (Թ) գրարի, քիվ 4 (36) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011
ՎԵՄ համահայկական հանդես

րով հանդերձ, ոչ մեկ գեղեցկություն չունի: Տները գրեթե միատեսակ նման հսկայական քառակուսի տուփեր [են], իրարու մոտ շարած:

Կարիներն աշխատում է բժիշկների և դեղագործների միության գրասենյակում, որպես սղագրող քարտուղարական բաժնում ու միաժամանակ հաճախում է երեկոյան կուրսեր, սովորում. հետևում է հոգեբանության և ընդհանուր զարգացման նպաստող դասընթացի:

Ես օրերս անց եմ կացնում ընթերցանությամբ և թղթեր մրոտելով հին անցած-դարձած, տեսած ու լսած բաների մասին: Եվ երբեք Թեհրանը չեմ մոռանում: Ես բնավ չեմ հասկանում այն մարդկանց, որոնք Թեհրանում լավ գործ ունեն, սեփական տուն, ապահով վիճակ, հրաժարվելով Իրանի շենչող արևից, եկել այստեղ, շարունակ վազվզում են դուլարի հետևից, առավոտից մինչև ուշ գիշեր ծուխ ու մուխ շնչում:

Նախանցյալ տարի թերթում կարդացի, որ մի խումբ իտալացի ճարտարագետներ ու արվեստագետներ գնացել են Հայաստան և շատ լավ տպավորություններով վերադարձել: Մեծ գնահատականով են արտահայտվել հայկական ճարտարապետության մասին: Մտածում էի, թերևս դու և Անսելմոն, օգտվելով առիթից, ընկերացել, նույնպես գնացել էիք Հայաստան: Ըստ իս, դուք ամենայն դյուրությամբ կարող եք գնալ իբրև տուրիստներ, հանդիպելու ձեր հարազատներին, որոնք գտնվում են Մոսկվա և Վայոց Ձորում (Գարալագյազ), որը շատ է փոխվել. կենտրոնական շատ հետամնաց Քեշիշքենդ գյուղը հիմա լուսավոր մեծ ավան է դարձել, իր թատրոնով, ակումբով, միջնակարգ դպրոցով և կոչվում է իր հին անունով՝ Եղեգնաձոր:

Շտապ-շտապ գրեցի նամակս, փոստին հանձնելու: Պատրաստ եմ միշտ մտքերի փոխանակություն ունենալու քեզ հետաքրքրող մեր հասարակական կյանքին վերաբերող հարցերի շուրջ:

Գոհարը և Կարիներն ջերմորեն բարևում են քեզ ու փեսա Անսելմոյին:

Համբույրներ երկուսիդ՝ Եղիշե

MR. & MRS. Ishkanian
91-04 70th Avenue
Forest Hills, N.Y. 11375

M-me Margo Francesconi
32, Via Ariosto
Milano, Italia 20145

Սիրելի Մարգո,

Ստացել եմ մարտ 5 թվակիր նամակդ, որը կարդացի հաճույքով ու գոհունակությամբ: Մեծապես գնահատելի է քո բուն հետաքրքրությունն ու խոր ապրումները մեր ցավոտ խնդիրներով ու հարցերով:

Նամակումդ շոշափած հարցերին կպատասխանեմ ամփոփ կերպով:

Նախ՝ քո հայերենի մասին, որ թույլ ես համարում, ուստի ամաչում ես, որ չես կարող լավ հայերեն գրել: Երանի թե սփյուռքի մեր կանանցից շատերը, որոնք մեր այբուբենն իսկ չգիտեն, քո չափ հայերեն գիտենալին: Տառափալների համար չպետք է ամաչել, հայերեն գրքեր կարդալով կարելի է վերացնել սխալները, կարևորն այն է, որ դու գիտցածդ հայերենով կարողանում ես տրամաբանորեն արտահայտվել ու միտքդ հասկացնել լիովին:

Գառնանք քո մյուս հարցերին: Սկսած այն օրվանից, երբ թողինք մեր հայրենիքը և տարագրվեցինք զանազան երկրներ, ամեն օր, ամեն ժամ ծեծում ենք նույն հարցերը, առանց շոշափելի արդյունքի: Պատճառներից մի քանիսը ինքը մատնանշել ես նամակումդ, որ շատ ճիշտ է, այն է՝ սփյուռքի հայության ցրվածությունը և իրարուց հսկայական տարածություններով բաժան ու հեռու գտնվելը: Հարկավ, աշխատանքները հաջող կերպով առաջ տանելու համար, ինչպես գրում ես՝ «անհրաժեշտ է մի քիչ էլ դրամ ունենալ», իսկ ես կասեմ, պետք է շատ դրամ ունենալ, այնքան, որ հնարավոր լինի բոլոր աշխատանքներն առաջ տանել:

Սակայն սիրելի Մարգո, **սփյուռքի հայության պակտում է ամենազվազոր միջոցը՝ ազգային միաբանությունն ու միակամությունը**, որպեսզի կարելի լինեք կուսիցիոն հիմունքներով ստեղծել ազգային ընդհանուր կենտրոնական մեկ ղեկավար մարմին, վեր բոլոր կուսակցություններից ու հոսանքներից, բոլոր գործերին և աշխատանքներին ընթացք տալու համար: Գրում եմ ամեն օր, պաթետիկ ճոճան

ճառեր արտասանում, շեշտում հայկական կենտրոն ունենալու անհրաժեշտության մասին, հայ դատը վարելու և սփյուռքի հայությունը հայ պահպանելու համար, սակայն արդյունքը՝ գրո:

Ի՞նչ է պատճառը, որ միություն չի կայանում, չէ՞ որ ամեն հայ, ինչ կուսակցության էլ պատկանելու լինի, իր սրտին պետք է մոտ զգա հայկական դատը և սփյուռքի հայությանը հայ պահելու գործը: Գլխավոր պատճառն այն է, որ ամեն մի հայ, ինչ կուսակցության էլ պատկանելիս լինի, նախ կուսակցական է և ապա հայ: Կուսակցական եսը ամենախոշոր և ուժեղ խոչընդոտն է հայկական միաբանության: Ճիշտ է, բոլոր ազգերի մեջ էլ կուսակցական բաժանումներ կան, մի բան, որ բնական ու հասկանալի է, սակայն պետական կյանք ունեցող ազգերի մեջ հնարավոր է լինում կուսիցիոն միություն ստեղծել, որովհետև դարեր շարունակ կազմակերպված պետական կյանք են վարել և պետական շահերի իրատես ըմբռնումներ ունեն, որից մենք գուրկ ենք վեց հարյուր տարվա ստրկական կյանք վարած լինելու հետևանքով:

Ի դեպ, Վենետիկի Մխիթարյան հայրերից մեկը՝ Վահան վրդ. Հովհաննիսյանը, այցելելով Հայաստան, մի գրքույկով՝ «Ինչպես տեսա Հայաստանը», արտահայտել է իր տպավորությունները և մեկ տեղում բավական ճիշտ արտահայտվել է, թե՛ «Մենք այժմ ազգ ենք դարձել Հայաստանում», հարկավ պետական իմաստով, որ շատ կարևոր է: Եթե չես կարդացել, ձեռք բեր, կարդա, բավական օբյեկտիվ գրվածք է: Տպագրված է Վենետիկում:

Երբ ազգային պետականություն ունեինք, երկիրը քայքայում էին մեր կենտրոնախույս նախարարները, որոնք չէին ենթարկվում թագավորին, յուրաքանչյուրը ինքնիշխան, ինքնագլուխ էր, անկախ: Երբ արաբները տիրեցին մեր երկրին, Բագրատունիները կարողացան թե քաղաքագիտությամբ և թե զինու ուժով անկախություն ձեռք բերել, սակայն հենց նույն Բագրատունի իշխաններից մեկը Լոռիում

առանձին թագավորություն հաստատեց, իսկ մեկ ուրիշը՝ Կարսում և պակասը լրացրին Վասպուրականի Արծրունյաց իշխանները, անկախ թագավորություն ստեղծելով: Եվ ներկայիս մեր կենտրոնախույս իշխանների դերը կուսակցություններն են կատարում:

Սիրելի Մարգո, պետք է իրերին բաց աչքերով նայել, որքան էլ տխուր ու սիրտ մաշող, բայց գոյություն ունեցող ակներև փաստերն անտեսել չենք կարող: Հայ դատը և սփյուռքի հայապահպանման գործը հավաքականորեն, ազգային միությամբ միայն հնարավոր է հաջող կերպով առաջ տանել, կուսակցությունների, առավել ևս անհատների, գատ-գատ կատարած աշխատանքը չի կարող արդյունավետ լինել: Մինչև որ սփյուռքում գործող կուսակցությունները լայնախոհությամբ, փոխադարձ հանդուրժողությամբ ու հարգանքով չմոտենան իրարու, ազգային գործերի ընդհանուր պատֆորմ մշակելու և ազգային կենտրոնական մարմին ստեղծելու, հնարավոր չափով լինի ցանկալի արդյունքի հասնել: Սփյուռքի յուրաքանչյուր գիտակից հայ պետք է այդ ուղղությամբ մտածե և աշխատե, թե իր պատկանած կուսակցության շարքերում և թե շարքերից դուրս:

Ինչ կվերաբերի նվաստիս, դժբախտաբար, ես հնարավորություն չունեմ օգտակար լինելու, որովհետև նախ՝ անգլերեն չգիտենալու պատճառով չեմ կարող որևէ ուղղությամբ շարժվել հենց այս հսկայածավալ քաղաքում, ուր մնաց ուրիշ քաղաքներ գնալու, երկրորդը՝ սփյուռքի հայության համար ես միանգամայն անծանոթ և անճանաչ մեկն եմ, և երրորդ՝ ինձնից անկախ պատճառով, որևէ կուսակցության մեջ չկամ ներկայիս, ազատ քաղաքացի եմ, **գուրկ համախոհ շրջապատից, որ շատ կարևոր է:** Վերջին հանգամանքը առանձին խնդիր է, կապ չունի վերև արժարժած խնդիրների հետ, որին անդրադառնալ կարող եմ ուրիշ անգամ, եթե հետաքրքիր լինի քեզ:

Ամսելմոյի⁸ կատարած քրտնաթոր աշխատանքը շատ շնորհակալ, ըստ արժանվույն

8 Անսելմո Ֆրանչեսկոնի (1921-2004), Մարգարիտա Թովմասյանի ամուսինը, իտալալացի ճանաչված քանդակագործ և նկարիչ: Ունի Յայոց Մեծ եղեռնին նվիրված նկարների մեծ շարք, որոնք տարբեր երկրներում ցուցադրվելով՝ իրենց նպաստն են բերել միջազգային հանրությանը Յայոց ցեղասպանությանը ծանոթացնելու գործում: Այդ ցուցահանդեսների մասին բազմիցս հրապարակումներ են եղել ինչպես ժամանակի եվրոպական մամուլում, նույնպես և հայ մամուլում («Յայրենիքի Ձայն», Եր., 04.09.1968թ., «Ալիք», Թեհրան, 20.02.1969թ. և այլն):

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Գ. (Թ) գառի, քիվ 4 (36) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011
ԿԼԻ համահայկական հանդես

գնահատելի գործ է, վստահ եմ, որ պիտի մեծ ուշադրության արժանանա և ուժեղ խթան դառնա օտարական ուրիշ շնորհալի արվեստագետների ևս հրապարակ գալուն: Եվ դա որպես կենդանի, ուժեղ և ազդու պրոպագանդ, մեծապես զարկ կտա հայկական հարցի արծարծման միջազգային ասպարեզում: Արդ, Անսելմոյի կատարած սքանչելի գործի համար, պի՞նդ համբուրում եմ իրեն և սրտանց ցանկանում, որ լիովին հաջողություն ունենա, հասնե իր նպատակին, որ նաև մեր նպատակն է:

Ափսոս, հազար ափսոս, որ մեր սիրելի Ջարեհը⁹ միանգամայն վաղաժամ և անակընկալ կերպով վախճանվեց ու չտեսավ, թե իր մանկական հիշողությամբ ինչքան է հուզել և ազդել Անսելմոյի վրա և մղել նրան ինքնամոռացությամբ նվիրվելու մի գործի, որն ըստ ամենայնի գնահատելի է և արժանի ամենայն ուշադրության, հայկական դատի առնչությամբ:

Շավասալը և Արլիզը¹⁰ իսկական Բաղդադի ծուլերից են, նամակ չեն գրում: Լիզիկն ասաց, որ փեշներից կքաշի:

Սեր մասին Փեփրոնեն ու Լիզիկը պատմած կլինեն, որ Գոհարն ու Կարինեն աշխատում են, ես անգործ եմ, դարձած ճրիակեր, ուստի անգործությունս արդարացրած լինելու համար թղթեր եմ մրոտում, հին բաներ գրի առնում, թերևս ապագային մեկը կօգտագործե:

Գոհարն ու Կարինեն ջերմորեն բարևում են Անսելմոյին և ինձ հետ միասին պի՞նդ համբուրում քեզ:

Յգրություն: Համբույրներով՝ Եղիշե

3 ապրիլ, 1968թ., Նիւ Եորք

⁹ Արմեն Գարոյի թույր Ջարեհի որդին՝ Ջարեհ Չանեսյանը, Մարգոյի և Անսելմոյի հարսանիքի քավորն է եղել և մտերիմ էր վերջիններիս հետ: 1915 թ. Եղեռնի ժամանակ յոթամյա Ջարեհը իր մեծ քրոջ՝ Արաքսյայի ձեռքը բռնած անցել էր գաղթի ողջ ճանապարհը: Նա Անսելմոյի խնդրանքով պատմել էր իր մանկական հիշողությունները, տպավորություններն այդ մասին: Եվ հենց նրանց տեղահանության և դեպի Արաբական անապատները քշվելու պատմության տպավորությամբ էլ Անսելմոն սկսեց նկարել Եղեռնի թեմաներով:
¹⁰ Շավասալ Թովմասյանի որդին է: Իսկական անունը՝ Ահարոն (1936-2003):